բանի որ այն զգալիորեն ավելի էժան է: Կամուրջը իր 164 երկաթբետոնե սյուներով վտանգավոր կդարձներ նավերի երթևեկությունը Կալեի՝ հանախ մառախլապատ նեղուցում: Գետնուղին կարժենա 143 միլիոն ֆունտ ստերլինգ:

Գեներալ դը Գոլը ցանկանում է անհապաղ սկսել գետնուղու կառուցումը: Այդ միջոցառման մեջ նա տեսնում է այն բանի փորձաքարը, թե Անգլիան իրոք կցանկա՞ր «միացում Եվրոպայի հետ»: Սակայն անգլիացիները բավական լավ են հիշում, թե ինչպես իրենց ընդունելությունը «Ընդհանուր շուկայի» մեջ խափանվեց դը Գոլի «ոչ»-ից: Բրիտանական հաղորդակցության մինիստրը հայտարարել է, որ առայժմ ոչինչ վճռված չէ, և էքսպերտների որոշումը հրապարակվել է միայն այն պատճառով, որ «մեր դեմոկրատական երկրում յուրաքանչյուրն իրավունք ունի հայտնելու իր կարծիքը»: Այսպիսով նաև այս զարմանքի և հիացման արժանի տեխնիկական նախագծի նկատմամբ ակներև են այն խորին անվստահությունն ու ախոյանությունը, որ տիրում է կապիտալիստական կոնցեռնների «արևմտյան աշխարհում»:

Կամուրջի համեմատությամբ գետնուղին ունի նաև բերություններ: Դրանցից հիմնականն այն է, որ այնտեղով ավտոմեքենաներ չպետք է երթևեկեն, քանի որ այրվող գազերը կբունավորեն գետնուղու օդը: Չնայած դրան գետնուղին կտա ժամանակի մեծ տնտեսում և կլինի զգալիորեն ավելի էժան՝ նավագնացության համեմատությամբ: Իսկ կամուրջը ավելի բանկ կնստեր, քան լրացուցիչ նավերի կամ ինքնաթիռների կառուցումը, որոնցով կապահովվեր հավասարազոր երթևեկություն:

Անգլո-ֆրանսիական հանձնաժողովը իր հաղորդման մեջ ենթադրում է տարեկան 1,3 միլիոն երթևեկության միջոց, 3,7 միլիոն ուղևոր և 4 միլիոն տոննա ապրանք:

◑ ՓՈՔՐ ԴԵՊՔԵՐ ՄԵԾ ՄԱՐԴԿԱՆՑ

ԿՅԱՆՔԻՑ

ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԿԵՆԳՈՒՐՈՒ»

Հռչակավոր ճանապարհորդ Կուկը, առաջին անգամ ոտք դնելով Ավստրալիա, մնում է պարմացած իր համար անհայտ կենդանու վրա, որը ետևի երկար ոտքերով ցատկում էր շատ բարձր: Կուկը ավստրալիացիներին հարցնում է այդ կենդանու անունը:

— Կենգուրու, կենգուրու,— պատասխանում են վայրենիները:

Հենց այդպես էլ անվանում են Կուկի տեսած կենդանուն: Հետագայում միայն, Կուկին հայտնի է դառնում, որ «կենգուրու» բացականչությունը տեղացիների լեզվով նշանակում է՝ «ես չեմ հասկանում»:

ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅՈՒՆ

Գյոթինգենում ուսանելիս Նիլս Բորը մի անգամ վատ է պատրաստված լինում կոլոկվիումին և շատ թույլ ելույթ է ունենում: Բայց նա չի վհատվում և վերջում ժպտալով ասում է.

— Ես այստեղ այնքան վատ ելույթներ լսեցի, որ խնդրում եմ իմ այս ելույթը դիտել որպես վրեժ:

ՁԱՓԱԶԱՆՑ ՈՒՇ Է

Գերմանացի բժիշկ Օսկար Լասսարը մի գեղջուկից նամակ է ստանում, ուր նամակագիրը խնդրում է օգնել իրեն՝ ամրացնելու մազերը:

Հնարավորություն չունենալով ընդունելության համար գնալ քաղաք, ախտորոշման համար նա իր մազերից մի փունջ դնում է նամակի մեջ: Լասսարը դեղ է ուղարկում և խնդրում ևս մի փունջ մազ ուղարկել՝ ավելի հանգամանորեն անալիզ կատարելու համար: Ի պատասխան, հիվանդը ափսոսանքով հայտնում է, որ անցյալ անգամ ուղարկել է իր վերջին մազերը:

digitised by A.R.A.R.@